ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

- Աշխատանքներ են տարվել Վայոց ձորի մարզի տարածքում ՀՀ պետական և համայնքային բյուջեներով կամ այլ ծրագրերով նախատեսված 2016թ-ի հնարավոր գարնանային վարարումների և սելավների ռիսկերից Վայոց ձորի մարզի բնակավայրերը, տնտեսական արժեքներ ներկայացնող տարածքները, գյուղատնտեսական հողատեսքերն ու բնակչության գույքը պաշտպանելու նպատակով անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումների ճշգրտման ուղղությամբ: Տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության ԲՊԱՀՎԿՎ:
- Աշխատանքներ են տարվել Վայոց ձորի մարզի բնակավայրերը, տնտեսական արժեք ներկայացնող տարածքներն ու բնակչության գույքը գետերի ջրերի վարարումների և սելավների ռիսկերից պաշտպանելու նպատակով առաջարկությունների ներկայացման ուղղությամբ:
- Ս/թ. ապրիլի 5-ին ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿՎ, Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության, ՀՀ տրանսպորտի նախարարության և Վայոց ձորի մարզպետարանի մասնագետների կողմից Մարտիրոսի համայնքում ուսումնասիրվել են սողանքային գոտում գտնվող բնակարանների վիճակը և նշված երևույթը:
- Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության օպերատիվ խումբը մարզպետարանի քաղաքաշինության վարչության մասնագետների հետ համատեղ Գոմք համայնքում ուսումնասիրել են սահքի հետևանքով բնակելի տան պատի փլուզման երևույթը, որի վերաբերյալ տվյալները ներկայացվել են ՀՀ ԱԻՆ ՓԾ ՃԿԱԿ:
- Տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿՎ մարզի ավագ, միջնակարգ, հիմնական և տարրական դպրոցներին սպառնացող արտաքին վտանգների վերաբերյալ:
- Աշխատանքներ են տարվել մարզի ուսումնական հաստատություններում աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանների մշակման ուղղությամբ:
- Ս/թ հունիսի 21-ին Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ օպերատիվ խումբը, մարզպետարանի քաղաքաշինության վարչության մասնագետների հետ համատեղ Խաչիկ համայնքում ուսումնասիրել են Է. Գրիգորյանին պատկանող 4-րդ կարգի վթարային բնակելի տան վիճակը: Համայնքապետին առաջարկվել է բնակիչներին ապահովել ժամանակավոր կացարանով:
- Ուսումնասիրվել և հսկողություն է սահմանվել 2016թ. ՀՀ պետական բյուջեով Վայոց ձորի մարզում նախատեսված կանխարգելիչ միջոցառումների կատարման ուղղությամբ: